1.Ընդունել համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի Արթիկ քաղաքում, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերից, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Երկաթուղայինների փողոց 3 հասցեում գտնվող, Դավիթ Հակոբի Իգիթյանի (ծնված՝ 1985 թվականի օգոստոսի 2-ին) և Մարինե Հենրիկի Վարդանյանի(ծնված՝ 1985 թվականի ապրիլի 3-ին) սեփականությունը հանդիսացող, 0,1372 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին(անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N05082026-08-0027, տրված՝ 2026 թվականի օգոստոսի 5-ին) կից, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Երկաթուղայինների փողոց 7 հողամաս հասցեում գտնվող, 0,02134 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N24052026-08-0001, տրված՝ 2026 թվականի մայիսի 24-ին) ուղղակի վաճառքով օտարել Դավիթ Հակոբի Իգիթյանին և Մարինե Հենրիկի Վարդանյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 4441,8 (չորս հազար չորս հարյուր քառասունմեկ ամբողջ ութ) Հայաստանի Հանրապետության դրամ,ընդհանուր՝ 947880 (ինը հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ :

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		

Մարտիրոսյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Սահակյան
Մինասյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 147-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲԻ ԻԳԻԹՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻՆԵ ՀԵՆՐԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի № 286-Ն որոշմամբ սահմանված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի 550-Ն որոշման 1-ին կետի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ընդունել համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի Արթիկ քաղաքում, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերից, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Հ.Բաղրամյան փողոց 2-րդ նրբանցք 8 հասցեում գտնվող, Դավիթ Հակոբի Իգիթյանի(ծնված՝ 1985 թվականի օգոստոսի 2-ին) և Մարինե Հենրիկի Վարդանյանի(ծնված՝ 1985 թվականի ապրիլի 3-ին) սեփականությունը հանդիսացող, 0,01116 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին(անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N06082026-08-0025, տրված՝ 2026 թվականի օգոստոսի 6-ին) կից, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Հ.Բաղրամյան փողոց 2-րդ նրբանցք 8/1 հողամաս հասցեում գտնվող, 0,00865 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N14092026-08-0036, տրված՝ 2026 թվականի սեպտեմբերի 14-ին) ուղղակի վաճառքով օտարել Դավիթ Հակոբի Իգիթյանին և Մարինե Հենրիկի Վարդանյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 4441,8 (չորս հազար չորս հարյուր քառասունմեկ ամբողջ հ ութ) Հայաստանի Հանրապետության դրամ,ընդհանուր՝ 384216 (երեք հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ :

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան

Թովմասյան
Մարտիրոսյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Սահակյան
Մինասյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 148-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԳԵՎՈՐԳ ՍԱՄՍՈՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի № 286-Ն որոշմամբ սահմանված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի 550-Ն որոշման 1-ին կետի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ընդունել համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի Արթիկ քաղաքում, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերից, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Բաղրամյան փողոց 35/1 հասցեում գտնվող, Գևորգ Սամսոնի Նահապետյանի (ծնված՝ 1967 թվականի օգոստոսի 19-ին) սեփականությունը հանդիսացող, 0,0144 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին(անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N12725425, տրված՝ 2006 թվականի ապրիլի 10-ին) կից, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Հ.Բաղրամյան փողոց 2-րդ նրբանցք
2 հողամաս հասցեում գտնվող, 0,00559 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N16092026-08-0066, տրված՝ 2026 թվականի սեպտեմբերի 16-ին) ուղղակի վաճառքով օտարել Գևորգ Սամսոնի Նահապետյանին: 2.Հողամասի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 4441,8 (չորս հազար չորս հարյուր քառասունմեկ ամբողջ ութ) Հայաստանի Հանրապետության դրամ,ընդհանուր՝ 248297 (երկու հարյուր քառասունութ հազար երկու հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		

Մարտիրոսյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Սահակյան
Մինասյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 149-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՐԳՍԻ ԲՈՅԱՋՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի,43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի, Արթիկ համայնքի Լեռնակերտ, Հայկասար, Հայրենյաց,Պեմզաշեն, Տուֆաշեն բնակավայրերի միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի գոտեվորման նախագիծը հաստատելու մասին» №52-Ա որոշումը և Շուշանիկ Սարգսի Բոյաջյանի 2026 թվականի ապրիլի 14-ի թիվ 1934 դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում գտնվող, Շուշանիկ Սարգսի Բոյաջյանի(ծնված՝ 1961 թվականի օգոստոսի 22-ին) սեփականություն հանդիսացող, 2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով փաստագրված(գրանցամատյան թիվ 3977), 08-063-0101-0001 կադաստրային ծածկագրով, 0,06000 հեկտար մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել և այն ընդգրկել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի կազմում:
2. Հողամասի նպատակային նշանկության սույն որոշմամբ կատարված փոփոխությունը արտացոլել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և համայքի հողային հաշվեկշիռներում:
3. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա :
4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Ասատրյան		

Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 150-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՏԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի,43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Անուշավան, Հոռոմ, Հովտաշեն, Սարատակ, Մեղրաշեն, Նոր Կյանք, Փանիկ, Սարատակ, Վարդաքար բնակավայրերի միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-11 համալցված տարածական պլանավորման փաստաթղթերի գոտեվորման նախագիծը հաստատելու մասին» №54-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ Սարատակ 1-ին փողոց 2-րդ նրբանցք 14 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, 08-105-0036-0002 կադաստրային ծածկագրով հողամասից 0,10000 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել և այն ընդգրկել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի կազմում (կցվում է հողամասի հատակագիծը):
2.Ընդունել ի գիտություն,որ վերոնշյալ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխվում է այն օտարելու նպատակով:
3.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա :
4.Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		

Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 151-Ն

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և «Հպապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ կետի և 67-րդ հոդվածի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ սահմանված «Պետական և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 13-րդ կետի գ) ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով «Ա. Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ի անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել համայնքի ղեկավարի առաջարկությունը, աճուրդային եղանակով օտարել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, սույն որոշման N 1 հավելվածով նախատեսված հողամասերը :
2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն սույն որոշման N1 հավելվածի:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու պայմաններով կազմակերպել և անցկացնել սույն որոշման N1 հավելվածում նշված անշարժ գույքերի աճուրդ-վաճառքը:
4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		

Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Արթիկ համայնքի ավագանու
2026թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 151-Ն որոշման

ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ՝ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

N	Հողամասի գտնվելու վայրը, գեղծումը	Սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը, ամսաթիվը	Հողամասի մակերեսը (հա) (մասնակի)	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի նկատմամբ սահմանափակումները (ծանրությունները)	Հողամասի վրա գտնվող շինությունները և այլ անշարժ գույքը	Հողամասի նկատմամբ իրավունքի տեսակը	Հողամասի նկատմամբ իրավունքի ձեռքբերման եղանակը	Հողամասի նկատմամբ իրավունքի ձեռքբերման դրամական արժեքը (դրամ)	Ձեռքբերման դրամական արժեքը հողամասի 1 քառ. մետրի համար (դրամ)	Հողամասի վրա գտնվող շինությունների ընդհանուր մակերեսը (քառ. մետր)	Հողամասի վրա գտնվող շինությունների ընդհանուր մակերեսի նկատմամբ ձեռքբերվող մասնաբաժինը (%)	Հողամասի վրա գտնվող շինությունների ընդհանուր մակերեսի նկատմամբ ձեռքբերվող մասնաբաժնի փոխհատուցման չափը (%)	Հողամասի վրա գտնվող շինությունների ընդհանուր մակերեսի նկատմամբ ձեռքբերվող մասնաբաժնի փոխհատուցման չափը
1	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք Ն.Հովնաթանի փողոց 7	08-002-0053-0099 16072026-08-0034	0,03991	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Բնակելի նշանակության շինությունների կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	18777000	1600000	214	1600000	30	5
2	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք Անկախության փողոց 34/9	08-002-0043-0077 28032026-08-0033	0,00216	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Բնակելի նշանակության շինությունների կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	44418000	250000	261	250000	40	5

3	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք Ա.Շիրակացու փողոց 13/6	08-002-0001-0067 16052026-08-0010	0,00915	Էներգետիկայի,տրանսպորտի,կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	կապի	Կապի կայանի կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	18777000	400000	233	400000	40	5
4	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ Գետափ 1-ին փողոց 7-րդ նրբանցք 1	08-031-0007-0011 31032026-08-0036	0,14476	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	Գյուղատնտեսական արտադրական նշանակության շինությունների կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	5148000	1400000	188	1400000	30	5
5	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք Վ.Համբարձումյան փողոց 28/2	08-002-0067-0275 17042026-08-0057	0,002925	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Բնակելի նշանակության շինությունների կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	28875000	120000	142	120000	40	5
6	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք Վ.Համբարձումյան փողոց 72	08-002-0067-0272 30032026-08-0028	0,004524	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Բնակելի նշանակության շինությունների կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	28875000	200000	153	200000	40	5
7	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք Շինարարների փողոց 2/5	08-002-0011-0065 26052026-08-0036	0,0056	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Բնակելի նշանակության շինությունների կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	28875000	300000	186	300000	40	5
8	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք Ս.Շահումյան փողոց 78/6	08-002-0053-0098 27052026-08-0073	0,04679	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Բնակելի նշանակության շինությունների կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	18777000	1500000	171	1500000	30	5
9	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք	08-002-0153-0317 28072026-08-0013	0,00384	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Բնակելի նշանակության շինությունների կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	44418000	300000	176	300000	40	5

	Թ.Տոնականյան փողոց 26/6														
10	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք գյուղ Անուշավան 1-ին փողոց 40/5	08-014-0070-0009 18082026-08-0052	0,02412	Բնակավայրերի	Հասարակական կանկառուցապատման	Հասարակական նշանակության շինությունների կառուցում	Չկան	Առկա է	Աճուրդ	5148000	250000	201	250000	30	5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 152-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ «JAC» ՄԱԿՆԻՇԻ «LJ166B3D2T2255918» ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐՈՎ ԱՎՏՈԲՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված «JAC» մակնիշի «LJ166B3D2T2255918» նույնականացման համարով ավտոբուսը հանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռից և ընդգրկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի հաշվեկշռում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան
Թովմասյան
Մարտիրոսյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան

Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 153-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «MERCEDES-BENZ SPRINTER 412D» ՄԱԿՆԻՇԻ 761 CM 61 ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱՆԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի սեփականություն հանդիսացող «MERCEDES-BENZ SPRINTER 412D» մակնիշի 761 CM 61 հաշվառման համարանիշերով տրանսպորտային միջոցն անհատույց օգտանգործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված տրանսպորտային միջոցն հանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի հաշվեկշռից և հաշվառել «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		

Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 154-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՏԱԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ գյուղի հարավարևելյան հատվածում գտնվող, 7-րդ փողոցից սկիզբ առնող փողոցն անվանակոչել՝ «7-րդ փողոց 2-րդ փակուղի» անվամբ (իրադրության հատակագիծը կցվում է):

2.Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Ասատրյան		
Չարչյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		
Մկրտչյան		

Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 155-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 29/3 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 08-002-013Ե-0047 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0,00078 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 481-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, 2026 թվականի սեպտեմբերի 16-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16092026-08-0016 վկայականը, քաղաքացի Սայադ Կարլենի Սահակյանի 2026 թվականի փետրվարի 11-ի թիվ 700 դիմումը և հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք Արթիկ քաղաք Անկախության փողոց 29/3 հողամաս հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, 2026 թվականի սեպտեմբերի 16-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16092026-08-0016 վկայականով փաստագրված, 0,00078 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը կառուցապատման իրավունքով 10(տասը) տարի ժամանակով Սայադ Կարլենի Սահակյանին տրամադրելու առաջարկությանը:
2. Տարեկան կառուցապատման իրավունքի վարձավճար սահմանել 12000 (տասներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սայադ Կարլենի Սահակյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր:
4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան

Թովմասյան
Մարտիրոսյան
Աղրամանյան
Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 156-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՄԱՆԹԱՇ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փոքր Մանթաշ գյուղի հյուսիսային հատվածում գտնվող, 2-րդ փողոցից սկիզբ առնող փողոցն անվանակոչել՝ «2-րդ փողոց 1-ին նրբանցք» անվամբ (իրադրության հատակագիծը կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի Փոքր Մանթաշ գյուղի արևելյան հատվածում գտնվող, 12-րդ փողոցից սկիզբ առնող փողոցն անվանակոչել՝ «12-րդ փողոց 2-րդ փակուղի» անվամբ (իրադրության հատակագիծը կցվում է):

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի Փոքր Մանթաշ գյուղի արևմտյան հատվածում գտնվող, 1-ին փողոցից սկիզբ առնող փողոցն անվանակոչել՝ «1-ին փողոց 2-րդ նրբանցք» անվամբ(իրադրության հատակագիծը կցվում է):

4.Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Ասատրյան		
Չարչյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		

Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 157-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ JEEP GRAND CHEROKEE 4,7 LIMITED ՄԱՐԴԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման նպատակով էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1667-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հրապարակային սակարկությունների միջոցով աճուրդային եղանակով օտարել ՀայաստանիՀանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող 2000 թվականին արտադրած JEEP GRAND CHEROKEE 4,7 LIMITED մարդատար ավտոմեքենան և հաստատել մեքենայի օտարման հրապարակային ծանուցումը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2.Հաստատել աճուրդի մասին հրապարակային ծանուցման կանոնակարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		

Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Արթիկ համայնքի ավագանու
2026 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 157-Ա որոշման

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2026թվականի հոկտեմբերի 21-ին, ժամը՝ 9:50-ին https://www.e-auctions.am կայքի միջոցով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2026թվականի սեպտեմբերի 22-ի թիվ **157-Ա** հրամանով օտարման ենթակա Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցը՝

Հրամանի հավելվածի լոտի համար	Գույքի անվանում / նույնացման համար	Թափքի տեսակ/ թողարկման տարեթիվ	Գույքի գնահատված արժեք (ՀՀ դրամ)	Մեկնարկային գին (ՀՀ դրամ)	Նախավճար (ՀՀ դրամ)	Նվազագույն գնային հավելման չափ (ՀՀ դրամ)	Գույքի շուկայական արժեքի դիմաց գանձվող վճարի չափ (ՀՀ դրամ)	Գույքի տեխնիկական վիճակ	Գույքի գտնվելու վայր
1	JEEP GRAND CHEROKEE 4,7 LIMITED	2000թ. ամենագնաց	1 300 000	**1 300 000**	**390 000**	**50 000**	**0**	Վազքը՝ 345532կմ, Շարժիչը՝ ընթացիկ մասերը՝ գերմաշված, հետևի կամրջակում հակազդեցության առկայություն,Տեխնիկական վիճակը՝ բավարար, Արտաքին տեսքը, միջին, Սալոնը՝	ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ համայնք, ք.Արթիկ Ազատության հրապարակ 1 հասցե

								բավարար, Գազա սարքի առկայութ յուն՝ 1.6 մեթան	

*Աճուրդով վաճառվող գույքի պահառության վայր այցելելու համար զանգահարել՝098 98 98 68 հեռ., ***https://www.e-auctions.am*** կայքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար՝ 244 5 20 21 հեռ.: Կազմակերպվող աճուրդների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար՝ 0244 5 20 21 հեռ.:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Էլեկտրոնային աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

2. Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով՝ նշելով՝

1) ֆիզիկական անձանց դեպքում՝ գրանցվողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, ծննդյան ամսաթիվը, հեռախոսահամարը, հասցեն, քաղաքացիությունը, հանրային ծառայությունների համարանիշը, էլ-փոստի հասցեն.
2) իրավաբանական անձանց դեպքում՝ կազմակերպության անվանումը, հասցեն ու հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև տնօրենի (եթե գրանցվողն այլ անձ է) անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, ծննդյան ամսաթիվը, հեռախոսահամարը, հասցեն, քաղաքացիությունը, հանրային ծառայությունների համարանիշը, էլ-փոստի հասցեն:

3. Համակարգում գրանցված անձը կարող է մասնակցել պետական և համայնքային գույքի օտարման (վաճառքի) նպատակով www.e-payments.am համակարգի միջոցով կազմակերպվող էլեկտրոնային աճուրդին Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված ժամկետի մեկնարկից սկսած մինչև ավարտից առնվազն 5 րոպե առաջ՝ նախավճար վճարելու դեպքում:

4. Էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ սահմանվում է լոտի աճուրդի նվազագույնն սկսման պահին հաջորդող երրորդ աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Էլեկտրոնային աճուրդի ավարտին նախորդող վերջին րոպեի ընթացքում յուրաքանչյուր նոր գնային առաջարկի դեպքում աճուրդը շարունակվում է ևս 1 րոպե՝ հաշված առաջարկի ստացման պահից: Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային առաջարկ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային առաջարկը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Ընդ որում, մեկից ավելի լոտերը կարող են սկսվել միաժամանակ, սակայն յուրաքանչյուր հաջորդ լոտ կարող է ավարտվել նախորդ լոտի ավարտից առնվազն 1 րոպե հետո:

5. Յուրաքանչյուր լոտի էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի աճուրդի նվազագույնն սկսման պահին հաջորդող երրորդ աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

6. Էլեկտրոնային աճուրդի ավարտին նախորդող վերջին րոպեի ընթացքում յուրաքանչյուր նոր գնային առաջարկի դեպքում աճուրդը շարունակվում է ևս 1 րոպե՝ հաշված առաջարկի ստացման

պահից: Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային առաջարկ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային առաջարկը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Ընդ որում, մեկից ավելի լոտերը կարող են սկսվել միաժամանակ, սակայն յուրաքանչյուր հաջորդ լոտ կարող է ավարտվել նախորդ լոտի ավարտից առնվազն 1 րոպե հետո:

7. Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով: Կազմակերպիչն էլեկտրոնային աճուրդի կայացման օրը հաղթող մասնակցի վերաբերյալ կազմում է սույն կարգով սահմանված ձևին համապատասխան արձանագրություն և առցանց եղանակով ուղարկում է հաղթող մասնակցին այն ստորագրելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու համար: Հաղթող մասնակիցն արձանագրության հետ կազմակերպչին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ անձը հաստատող փաստաթղթի, փախստական անձի դեպքում՝ նույնականացման քարտի կամ ճամփորդական փաստաթղթի, իսկ օտարերկրյա քաղաքացին՝ անձնագրի պատճենները և թարգմանությունը.
2) իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները, իսկ քաղաքացիների, իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարի և լիազորված անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
3) իրավաբանական անձանց համար նաև գրավոր հավաստում այն մասին, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը տվյալ ձևով գնելու համար պետական համապատասխան մարմինների համաձայնություն չի պահանջվում կամ, որ պահանջվող համաձայնություններն ստացված են (կցելով այդ համաձայնագրերը).
4) հաղթողի կողմից տրված լիազորագիրը (եթե արձանագրությունն ստորագրում է լիազորված անձը):

8. Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցն ստորագրված արձանագրությունն ու 7-րդ կետում նշված փաստաթղթերը, աճուրդի կայացման օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, առցանց եղանակով փոխանցում է կազմակերպչին:

9. Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել լոտի գինն ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան՝ 900205101125 հաշվեհամարին՝ պարտադիր նշելով օտարվող գույքի հաշվառման և նույնականացման համարները և ստացողի տվյալները/Արթիկի համայնքապետարան/:

10. Էլեկտրոնային աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած մասնակցի նախավճարը երեք աշխատանքային օրվա ընթացքում ապասառեցվում է, իսկ համապատասխան հաշվին փոխանցվածը վերադարձվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

11. Աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով:

12. Համակարգի տեխնիկական անսարքության (ձախողման) դեպքում էլեկտրոնային աճուրդների անցկացումը կարող է կասեցվել մինչև տեխնիկական անսարքությունների վերացումը, որոնց մասին աճուրդի կազմակերպիչը տեղեկացնում է տվյալ լոտի աճուրդի մասնակիցներին՝ էլեկտրոնային փոստի կամ հեռախոսային հաղորդագրության միջոցով: Յուրաքանչյուր տեխնիկական անսարքության դեպքում կազմվում է տեղեկանք անսարքության պատճառների մասին և այն տեղադրվում է էլեկտրոնային մատյանում: Տեղեկանքին կից ներկայացվում է համակարգն սպասարկող անձի եզրակացությունը, ընդ որում, եթե տեխնիկական անսարքության (ձախողման) պատճառով մասնակիցներից մեկը հաղթող է ճանաչվել, ապա կազմակերպիչն անսարքության պատճառների մասին տեղեկանքի հիման վրա կազմում է հաղթող չճանաչելու մասին արձանագրություն, վճարված նախավճարը 3 աշխատանքային օրվա ընթացքում ապասառեցվում է, իսկ համապատասխան հաշվին փոխանցվածը՝ կազմակերպչի կողմից վերադարձվում է:

13. Աճուրդում հաղթած մասնակիցը եթե չի ստորագրել արձանագրությունը կամ հրաժարվել է կատարել հետագա վճարումները կամ սահմանված ժամկետում 7-րդ կետում նշված շտկված

փաստաթղթերը չի ներկայացվել, ապա աճուրդը համարվում է չկայացած, նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բյուջե:

*__Ծանուցում.__

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 283 հոդված.

Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը՝պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամառանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Աճուրդի կազմակերպիչ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան

Աճուրդի կազմակերպչի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 158-Ա

Արթիկ համայնք 22 սեպտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2026թվականի հերթական նիստի օր նշանակել 2026 թվականի հոկտեմբերի 16-ին ժամը 15:00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Ասատրյան		
Չարչյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի սեպտեմբերի 22